# ԱՆՎԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆ

## (ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի ծննդյան 80 ամյակի առթիվ)

*Լրացավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պետական մրցանակի դափնեկիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայաստանի հին դարերի պատմության բաժնի վարիչ Սուրեն Տիգրանի Երեմյանի 80 ամյակը։*

*Ս. Երեմյանը ծնվել է 1908 թ. ապրիլի 10-ին Թբիլիսիում, բանվորի ընտանիքում։ Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1928 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը։ Այստեղ Ս. Երեմյանին վիճակվեց աշակերտել Հ. Մանանդյանին, որի ղեկավարությամբ նա գրեց իր առաջին գիտական աշխատանքը՝ Անդրկովկասի առևտրական ուղիների մասին IV դարում՝ ըստ հռոմեական ճանապարհացույց «Պեյտինգերյան քարտեզի», որը լույս տեսավ 1939 թ. «Вестник древней истории» հանդեսում։*

*Համալսարանն ավարտելուց հետո Ս. Երեմյանը 1932 թ. Թբիլիսիում ընդունվում է ՍՍՀՄ ԳԱ անդրկովկասյան մասնաճյուղի կովկասագիտական ինստիտուտի ասպիրանտուրան՝ ղեկավար ունենալով ակադեմիկոս Ն. Մառին։ Անձնական ծանոթությունը և շփումն անվանի վրացագետների և, առաջին հերթին, Ի. Ջավախիշվիլու հետ զգալիորեն նպաստեցին Ս. Երեմյանի կովկասագիտական հակումների ձևավորմանը։*

*1935 թ. Լենինգրադում Ս. Երեմյանը պաշտպանում է «Քարթլիի (Արևելյան Վրաստանի) ֆեոդալական կազմավորումները մարզպանական շրջանում» թեմայով թեկնածուական դիսերտացիան։ Այստեղ Ս. Երեմյանն ընդունվում է ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի դոկտորանտուրա, իսկ 1938 թ. դառնում է նույն ինստիտուտի ավագ գիտական աշխատակիցը մինչև 1941 թ., երբ տեղափոխվում է Երևան։*

*Լենինգրադում աշխատած տարիներին Ս. Երեմյանը «ՍՍՀՄ պատմություն» բազմահատորյակի համար (1939 թ.) գրում է Հայաստանի, Վիրքի, Աղվանքի և Կոլքիսի պատմությունը հնադույն շրջանից մինչև IX դ.։ Այստեղ լիովին դրսևորվում են Ս. Երեմյանի՝ մարքսիստ-պատմաբանի ունակությունները, ինչպես նաև հմուտ քարտեզագետի ձիրքը։*

*Ս. Երեմյանի գիտական հետագա ճակատագրի համար որոշակի նշանակություն ունեցավ ծանոթությունն ակադեմիկոս Վ. Ստրուվեի հետ, որը խոր ազդեցություն թողեց հայ գիտնականի աշխարհայացքի վրա՝ հին Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմությունը շարադրելիս։*

*1941 թ. Ս. Երեմյանն աշխատանքի է անցնում Արմֆանում ու ապա ՀՍՍՀ նորակազմ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում, որտեղ շուտով դառնում է հին և միջին դարերի պատմության բաժնի վարիչը։ Պատմության ինստիտուտում, որտեղ Ս. Երեմյանն աշխատում է առ այսօր, նա ծավալեց գիտական բեղուն գործունեություն, որը պսակվեց պատմագիտական առաջնակարգ նշանակություն ունեցող մի շարք պրոբլեմների առաջադրումով և լուծումով։*

*Ս. Երեմյանը գիտական բազմազան հետաքրքրությունների տեր մասնագետ է։ Զբաղվելով Հայաստանի հնադույն, հին և միջնադարի պատմության ժամանակաշրջաններով, նա խորպես տիրապետեց նրա տարբեր բնագավառների՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակույթի*

պատմության հարցերին։ Այս ամենն ուղեկցվում էր նյութի, աղբյուրների ու փաստերի խոր իմացությամբ։

Ս. Երեմյանի գիտելիքների պաշարն անսահման է թվում, մշակած պրոբլեմների թիվը՝ մեծ, թեպետ, ի վերջո, նրա գիտական գործունեությունն ընթացել է մի քանի հիմնական ուղղություններով։ Ս. Երեմյանի գիտական ժառանգության մեջ կարևոր տեղ են գրավում հատկապես հայ ժողովրդի ծագման պրոբլեմին նվիրված աշխատությունները։ 1950-ական թվականների սկզբին հանրապետական («ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 6) և համամիութենական («Вопросы истории», 1952, № 7) գիտական մամուլում նա հանդես եկավ երկու ուշագրավ հոդվածներով՝ նվիրված հայերի էթնոգենեզիսի հարցերին։ Սրանք հայ մարքսիստական պատմագիտության մեջ գիտական հասարակայնությանը խիստ հուզող այդ հարցերի շարադրանքի առաջին փորձերն էին։ Անշուշտ, խնդիրը հեշտանում էր այն տեսակետից, որ հրապարակի վրա էին Բ. Պիոտրովսկու և Գ. Ղափանցյանի հանրահայտ մենագրությունները՝ մեկը Արմե երկրի, մյուսը Հայասա-Ազզիի մասին։ Սակայն դեռևս զգացվում էր կապակցված պատկերի պակասը և իր այս առաջին հոդվածներում Ս. Երեմյանը լրացրեց այս բացը։ Ապա հաջորդեցին նոր հոդվածներ Արմե-Շուպրիտ երկրի և հայ ժողովրդի կազմավորման ընթացքի մասին, որոնք զգալիորեն ընդլայնեցին պրոբլեմի շրջանակներն ու հեռանկարները։ Արմե-Շուպրիայի մասին հոդվածը վեր հանեց արմենական հնագույն իշխանության պատմությունը Հայկական լեռնաշխարհում՝ մ. թ. ա. XII դ. սկսած։ Հայ ժողովրդի ծագման վերաբերյալ Ս. Երեմյանի կատարած աշխատանքների արդյունքներն ամփոփվեցին 1971 թ. լույս տեսած «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական հրատարակության առաջին հատորի համապատասխան գլուխներում և ենթագլուխներում։ Առանց չափազանցության կարելի է պնդել, որ այդ հատորում Ս. Երեմյանի ներկայացրածը լավագույնն ու ամբողջականն է առայսօր հրապարակի վրա եղած նույն պրոբլեմներին նվիրված աշխատությունների շարքում։ Այժմ կարելի է վստահությամբ ասել, որ Ս. Երեմյանը իր աշխատություններով հանդես եկավ այն ժամանակ, երբ հայագիտության մեջ հայ ժողովրդի ծագման պրոբլեմը վիճարկում էին երկու տեսություններ։ Առաջին տեսության կողմնակիցները հայ ժողովրդին համարյա կազմավորված վիճակում եկվոր էին համարում, իսկ երկրորդ տեսության կողմնակիցները հայ ժողովրդին ամբողջությամբ համարում էին տեղաբնիկ ցեղերի արգասիք։ Այս տեսություններից Ս. Երեմյանը վերցրեց այն, ինչ առավելապես իր հաստատումն է գտնում աղբյուրների մեջ և եկավ այն եզրակացության, որ հայ ժողովուրդը կազմավորվել է տեղում, Հայկական լեռնաշխարհում, և որ հայ ժողովրդի կարևոր բաղադրիչը Հայկական լեռնաշխարհում վաղուց ի վեր բնակվող խուրրի-ուրարտական ցեղերն են, որոնց մարդաբանական տիպի, մշակույթի և այլ տարրերի ժառանգորդը հայ ժողովուրդն է։ Միաժամանակ, ելնելով հայոց լեզվի հնդեվրոպական բնույթից և մի շարք այլ տվյալներից, Ս. Երեմյանը գտնում է, որ հայ ժողովրդի կազմավորման գործում որոշակի դեր են խաղացել նաև հնդեվրոպական ցեղերը, որոնց առկայությունը Հայկական լեռնաշխարհում հաստատվում է հնագույն ժամանակներից։

Գիտական շրջանառության մեջ թարմ տվյալներ գնելու և հին տվյալներին նոր մեկնաբանություն տալու ճանապարհով Ս. Երեմյանը նախամիջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները բնորոշեց որպես ստրկատիրական և բացահայտեց դրանց էությունը բնութագրող մի շարք կարևոր կողմեր։ Հայտնի է, որ, մինչև Ս. Երեմյանի աշխատությունների երևան գալն ինչպես սովետական, այնպես և նախասովետական հայ պատմագիտության մեջ իշխում էր այն տեսակետը, որ հին Հայաստանի նախամիջնադարյան ժամանակաշրջանի հասարակարգը ֆեոդալական էր։ Ինչպես հայտնի է, այդ տեսակետը պաշտպանել են այնպիսի անվանի գիտնականներ, ինչպիսիք Ն. Ադոնցն ու Հ. Մանանդյանն էին։ Այդ տեսակետը վերանայելու համար Ս. Երեմյանից քիչ չանքեր չպահանջվեցին։ Դեռևս 1939 թ. լույս տեսած «ՍՍՀՄ պատմության» համապատասխան բաժիններում, ապա հաջորդող մի շարք հոդվածներում («Հելլենիստական դարաշրջանի Հայաստանի հասարակարգի հիմնական գծերը»—«ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1948, № 11, «Ստրկության և ստրկատիրության մասին հին Հայաստանում»—«Вестник Древней Истории», 1950, № 1 և այլն) և առավելապես իր դոկտորական դիսերտացիայում («Հին Հայաստանի ստրկատիրական հասարակարգը»), որը նա պաշտպանեց 1953 թ. Մոսկվայում, Ս. Երեմյանը հանգամանորեն շարադրեց իր փաստարկները։

Ս. Երեմյանի ուսումնասիրությունների տեսադաշտում էին գտնվում հին Հայաստանի արհեստները, առևտուրը, գյուղական համայնքը, քաղաքն ու քաղաքային կյանքը և հատկապես հողային հարաբերությունները։ Նա ցույց տվեց, որ Հայաստանի անտիկ դարաշրջանի մասնա-

տիրական տնտեսություններում՝ դաստակերտներում և ագարակներում, քաղաքային և տաճարային տնտեսություններում կիրառություն էր գտնում ստրկական աշխատանքը։ Միևնույն ժամանակ Ս. Երեմյանն ուսումնասիրել է հին հայկական ստրկատիրական հասարակարգի առանձնահատկությունները, որոնցից ամենաէականը դրսևորվել է գյուղական համայնքի և երկրի սոցիալ-տնտեսական կյանքում դրա խաղացած մեծ գերի մեջ։ Այս նոր տեսակետները, որոնք միանգամայն համահունչ էին սովետական պատմագիտության մեջ ղեկավարվող 1930-ական թվերից տարածում գտած կոնցեպցիաներին, չէին կարող ազդեցություն չգործել նաև հաշորդ սերնդի պատմաբանների վրա։ Նրանցից ամեն մեկը՝ Գ. Սարգսյանը, Ա. Փերիխանյանը, Ս. Կրկյաշարյանը, իրենց սեփական ուղին ունեցան պատմագիտության մեջ, բայց Հայաստանի հին հասարակարգի հարցերը մշակելիս անմիջականորեն շարունակեցին Ս. Երեմյանի առաջ քաշած տեսակետները։ Նրանց աշխատություններում հին Հայաստանի հասարակարգի ուսումնասիրությունը հասավ բարձունքների, որոնք հազիվ տեսանելի էին 1930—40-ական թվերի սահմանագծից, երբ Ս. Երեմյանը ձեռնամուխ էր լինում վերոհիշյալ պրոբլեմի մշակմանը։

Այնուամենայնիվ, թեև հայագիտական միջավայրում «երեմյանական» լուծումը կարծես սառարկությունների տեղիք չի տալիս, սակայն կարող է տարբեր առիթներով վիճարկվել։ Այսպես, Գ. Մելիքիշվիլին՝ հին Արևելքի և հին Վիրքի հասարակությունները, իսկ Ա. Նովոսելցեվը՝ հին Անդրկովկասի և հին Հայաստանի հասարակությունները, բնութագրում են տարբեր ձևով, քան Ս. Երեմյանը՝ դրանց մեջ տեսնելով ինչ-որ նախաֆեոդալական կազմավորումներ։ Միևնույն ժամանակ չի կարելի անտեսել այն իրողությունը, որ հին Հայաստանի քաղաքների հնագիտական ուսումնասիրության արդյունքների համադրումը հելլենիստական, ստրկատիրական Արևելքի քաղաքների վերաբերյալ գիտական տվյալների հետ, թույլ է տալիս խոսել հին հայկական քաղաքների, գոնե մի քանիսի, ստրկատիրական կենտրոններ լինելու մասին, հանգամանք, որը չի կարող լրացուցիչ կերպով չհաստատել Ս. Երեմյանի և իր դպրոցի կողմից հին հայկական հասարակարգին տված ընդհանուր գնահատականը։

Հնագույն և հին Հայաստանի պատմության ասպարեզում Ս. Երեմյանի արածը թվարկելիս չենք կարող անտեսել հայ ժողովրդի ծագման և հին Հայաստանի հասարակարգի պրոբլեմների սահմանագծում ուրվագծվող այնպիսի կարևոր պրոբլեմի մշակումը, ինչպիսին հին հայկական պետական կազմավորումների առաջացումն է, նույն սահմանագծում ձևավորվող հայկական թագավորական հնագույն տոհմի՝ Երվանդունիների կամ վաչկատուն ցեղերի՝ կիմերների և սկյութների, դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքների հետ կապված հարցերի լուսաբանումը։

Որպես խոշոր միջնադարագետ, Ս. Երեմյանը մասնագիտորեն զբաղվել է հայկական ֆեոդալիզմի պատմությամբ։ Ունենալով այնպիսի ականավոր նախորդներ, ինչպիսիք Ն. Ադոնցն ու Հ. Մանանդյանն էին, Ս. Երեմյանը զգալիորեն առաջ մղեց հայկական ավատատիրության հարցերի մշակումը, առանձնացնելով դրանցից հիմնական նշանակություն ունեցող երկուսը՝ ֆեոդալիզմի ծագումը Հայաստանում և ֆեոդալիզմի դարաշրջանի պարբերացումը։ Ստրկատիրական հասարակարգի ուսումնասիրությունը Ս. Երեմյանին բերեց այն համոզման, որ Հայաստանում ֆեոդալիզմի տարրերը հանդես են եկել մ. թ. I դ. և որ մ. թ. III—IV դդ. ֆեոդալական հարաբերություններն արդեն ձևավորված էին։ Ըստ Ս. Երեմյանի հայկական ֆեոդալիզմը ստորաբաժանվում է վաղ (III—VIII դդ.), զարգացած (IX—XIII դդ.) և անկման (XIV—XVIII դդ.) ժամանակահատվածների։ Այս պարբերացումն ընդհանուր ճանաչում գտավ ոչ միայն պատմաբանների շրջանում։ Հայաստանի միջնադարյան նյութական մշակույթի պարբերացման հիմքում, որն առաջարկել են հայ հնագետները, նույնպես ընկած են Ս. Երեմյանի վերոհիշյալ սահմանազատումները։

Միջնադարի սոցիալ-տնտեսական կյանքից բացի Ս. Երեմյանին հետաքրքրել են քաղաքական պատմությունը, մշակույթը։ Նշանակալից է նրա ներդրումը Ջաքարյան Հայաստանի պատմությունն ուսումնասիրելու բնագավառում։ Այստեղ ևս երևան եկան Ս. Երեմյանի կովկասագիտական փայլուն գիտելիքները, հատկապես արտաքին թշնամիների դեմ հայ-վրացական համատեղ պայքարը վերարտադրելիս։

Կա ևս մի ընդարձակ բնագավառ, որտեղ Ս. Երեմյան-հետազոտողի տաղանդն իր ծաղկումը գտավ։ Դա պատմական աշխարհագրությունն ու քարտեզագրությունն է։ Ս. Երեմյանի բարտեզներով են հագեցած համամիութենական և հանրապետական նշանակության բազմաթիվ հրատարակություններ՝ ձեռնարկներ, դասագրքեր, կոլեկտիվ աշխատանքներ, բազմահատորյակներ։ Ամեն մի քարտեզում Ս. Երեմյանը փաստորեն խտացված ձևով պատկերել է տվյալ դարաշրջանի

պատմությունը՝ իր տնտեսական, քաղաքական, վարչական և այլ դրսևորումներով հանդերձ։ Նման աշխատությունների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում «Աշխարհացույցը»։ Ինչպես ցույց է տվել Ս. Երեմյանը «Հայաստանն ըստ Աշխարհացույց»-ի աշխատության մեջ, հայ միջնադարյան գիտական մտքի այս հոյակապ հուշարձանը քարտեզների մի նշանակալից ժողովածու է, որը պահպանել է անտիկ շրջանի աշխարհագրության լավագույն ավանդները։

1984 թ. լույս տեսավ «Հայ ժողովրդի պատմության» երկրորդ հատորը, որով լրացավ ակադեմիական բազմահատորյակի հրատարակումը։ Հատորի մի հոծ մասին՝ III—VI դարերին, այդ ժամանակաշրջանի քաղաքական պատմության, սոցիալ-տնտեսական հարաբերությունների, մշակույթի որոշ հարցերին նվիրված էջերը պատկանում են Ս. Երեմյանի գրչին։

Արգասավոր է եղել Ս. Երեմյանի մանկավարժական գործունեությունը, որի սկզբնավորումը կապվում է Լենինգրադի հետ։ Այստեղ նա հայ ժողովրդի պատմություն է դասավանդել տեղի համալսարանի պատմության և բանասիրական ֆակուլտետներում։ Հայաստան տեղափոխվելուց հետո Ս. Երեմյանը շարունակեց մանկավարժական աշխատանքը Երևանի պետական համալսարանում, Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական, Վ. Բրյուսովի անվան ռուսական մանկավարժական ինստիտուտներում, որտեղ դասավանդում էր հայ և վրաց ժողովուրդների պատմություն և Հայաստանի պատմական աշխարհագրություն։

Գիտական և մանկավարժական աշխատանքին զուգահեռ Ս. Երեմյանը զբաղվել է գիտակազմակերպչական գործունեությամբ։ Երևան տեղափոխվելուց և ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի կազմակերպումից հետո անընդմեջ, առ այսօր նա պատմության ինստիտուտի հին և միջին դարերի պատմության միացյալ բաժնի կամ առանձին՝ հին դարերի ու միջին դարերի պատմության բաժինների վարիչն է։ 1953—1959 թթ. Ս. Երեմյանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտորն էր, իսկ 1965—1968 թթ. վարել է ՀՍՍՀ ԳԱ հասարակագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը։ Սովետա-հայ պատմագիտության զարգացման համար հատկապես կարևոր դարձան պատմության ինստիտուտի գործունեության այն տարիները, երբ ինստիտուտը աշխատում էր Ս. Երեմյանի ղեկավարությամբ։ Այդ տարիներին հրատարակվեցին առաջնակարգ մի շարք աշխատություններ և գիտական հիմքերը դրվեցին այնպիսի կարևոր ձեռնարկության, ինչպիսին «Հայ ժողովրդի պատմությունն» ակադեմիական ութհատորյակն է։

Սակայն Ս. Երեմյանի ամենամեծ երախտիքն այդ տարիներին երիտասարդ, հեռանկարային կադրերով ինստիտուտը համալրելն էր։ Մասնագիտացող երիտասարդները մշտապես զգացել են Ս. Երեմյանի հոգատարությունն իրենց նկատմամբ, նրա բարյացակամ և ընդառաջող վերաբերմունքը։ Նրանցից շատերն իրենց աշխատանքները շարունակեցին արևելագիտության ու հնագիտության և ազգագրության ինստիտուտներում, Մատենադարանում, պետհամալսարանում։

Իր 80 ամյակի առթիվ մի անգամ ևս շնորհավորենք թանկագին հոբելյարին և ցանկանանք նրան նորանոր հաջողություններ՝ ի փառս սովետական գիտության։

ԳԵՎՈՐԳ ՏԻՐԱՅԱՆ

Պատմական գիտություններ դոկտոր